

Տեղեկատվություն

«Դիլիջան» ԱՊ » ՊՈԱԿ-ի 2015թ-ի հոկտեմբեր ամսին կատարած աշխատանքները

2015 թ-ի Աշխատանքային պլան-ծրագրով նախատեսված աշխատանքներից «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի բաժիններում հոկտեմբեր ամսում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից ԱՊ-ի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 31 ծառ, որոնց համար կազմվել է 6 անտառխախտման արձանագրություն և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին՝ ընթացք տալու: Մթերվել են 400կգ կաղնու և 50կգ ընկույզի սերմեր: Սույն թվականի հոկտեմբերի 20-ից ազգային պարկի տարածքում սկսվել են աշնանային հերթական ստուգողական ստուգումը, որը կավարտվի նոյեմբերի 20-ին:

2. Գիտական բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել են՝ «Դիլիջան» ազգային պարկի տարածքում վայրի պտղատուների և հիմնական ծառատեսակների (հաճարենի, կաղնի, բոխի) ֆենոլոգիայի ուսումնասիրում, քարտադարանի լրացում, 11 հերբարիումների պատրաստում, «Դիլիջան» ազգային պարկի տարածքի ուտելի և թունավոր սնկերի ուսումնասիրում: «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղի տարածքում շարունակվել են բալրբան տեսակի բազեի օրվա ցիկլի դիտարկումները (սննդառությունը, ակտիվությունը): Ավարտվել են «Դիլիջան» ԱՊ-ի տարածքում հանդիպող ՀՀ կարմիր գրքում գրանցված բույսերը» վերնագրով բույսերի տպագրման աշխատանքները:

3. Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի կողմից իրականացվել են բնապահպանական օրացույցի նախապատրաստման աշխատանքները: Էկոտուրիստական մի քանի երթուղիներում կատարվել են աղբահանության աշխատանքներ:

4. Պահպանության աշխատանքները բարելավելու նպատակով կազմակերպությունը ձեռք է բերել TOYOTA HILUX և Mitsubishi L200 ամենագնաց-պիկապ մեքենաներ: